Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին կիսամյակին կատարված աշխատանքների մասին

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավար Զարգանդ Գրիգորյանը օրենքով տրված լիազորությունների շրջանակներում 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարել է ներքոհիշյալ աշխատանքները հետևյալ բնագավառներում.

1.քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում.

հաշվետու ժամանակաշրջանում այս բնագավառում որպես պարտադիր լիազորություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են համայնքի շահերը բոլոր կարգի հարաբերություններում և մակարդակներում:Կազմակերպվել է թվով 60 քաղաքացիների ընդունելություն, հատկացվել է առաջին եռամսյակում՝ 473, իսկ երկրորդ եռամսյակում՝ 351 տեղեկանք, ընթացք է տրվել քաղաքացիների կողմից ներկայացված 96 դիմումների, որոնցից 73 քաղաքացու հատկացվել է դրամական օգնություն, իսկ մնացած դիմումներին համապատասխան ընթացք է տրվել: Քաղաքացիների կողմից այլ բողոքներ չեն եղել:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկվել է միջոցներ կարկտահարության տարերային աղետները վերացնելու ուղղությամբ՝ համայնքում տեղադրված երկու հակակարկտային կայանների գործարկման միջոցով:

Հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից ընդունած որոշումները՝ համայնքի թվով 3 բնակչի նկատմամբ հոգաբարձու և 2 բնակչի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին:

2.ֆինանսների բնագավառում.

համայնքի ղեկավարի աշխատակազմը ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները, ինչպես նաև առաջին եռամսյակի կատարողականը:

Համայնքի ղեկավարը տնօրինել է բյուջեի միջոցները և ապահովվել դրանց նպատակային օգտագործումը՝

հավաքագրվել է 38914503 (երեսունութ միլիոն ինը հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր երեք) դրամ եկամուտ, որից՝

հողի հարկ	9550091	(53.06%)
հողի վարձավճար	721607	(29.02 %)
գույքահարկ շենքերի և շինությունների	1521225	(54.33%)
գույքահարկ փոխադրամիջոցների	3026780	(75.67%)
այլ ոչ հարկային եկամուտներ	793000	(15.25%)
դոտացիա	22609400	(50.0%)
տեղական տուրքեր	79400	(27.79%)
վարչական բյուջեի պահուստային ֆոնդից	ֆոնդային բյուջե կատարվող հատկացում 613000	(8.54 %)

կատարվել է 39386409 (երեսունինը միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր ինը) դրամի ծախս, որից՝

աշխատավարձ	7907115
պարգևատրումներ	200000
կենսաթոշակային ֆոնդ	1478075
էներգետիկ ծառայություններ	1225233
կապի ծառայություն	110951
համակարգչային ծառայություններ	38600
մասնագիտական	11240
գրասենյակային նյութեր	200000
մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	20000
տրանսպորտային նյութեր	1869370
կենցաղային և հանրային սնունդ	51800
տեղեկատվական ծառայություններ	48000
կառավարչական ծառայություններ	225000
պարտադիր վճարներ	1190946
ներկայացուցչական ծախսեր	624500
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3730000
մասնագիտական ծառայություններ	470856
շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	2580000
հատուկ նպատակային այլ նյութեր	580000
շենքերի և շինությունների կառուցում	790000
տրանսպորտային ծախսեր	4000000
գեոդեզիական ծառայություններ	120000
կոմունալ ծառայություններ	990000
գույքի և սարքավորումների	500000
այլ նպաստներ բյուջեից	4764000
<<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինություն	
աշխատավարձ	2054528
կենսաթոշակային ֆոնդ	496946
կառավարչական ծառայություններ	195000
մասնագիտական ծառայություններ	211423
արտադպրոցական դաստիարակություն	2702823

3.հասարակական կարգի պահպանության բնագավառում.

հասարակական կարգի պահպանության բնագավառում պատվիրակված լիազորությունների շրջանակներում օրենքով նախատեսված դեպքերով և կարգով թվով մեկ անձ ենթարկվել է վարչական պատասխանատվության 1000 դրամի չափով՝ ոչ սահմանված վայրում առևտուր կատարելու համար:

4.պաշտպանության բնագավառում.

համայնքի ղեկավարի կողմից աջակցություն է ցուցաբերվել քաղպաշտպանության մարմինների գործունեությունը, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, զինծառայողների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

5. քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

այս բնագավառում համայնքի ղեկավարի կողմից հատկացվել է 5 կառուցապատողի ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, 6 շինարարության թույլտվություն և 2 ավարտական ակտ:Կազմակերպվել է աղբահանություն, որի համար ծախսվել է 990000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ:Իրականացվել է համայնքային սեփականություն համարվող մշակույթի տան իրավունքի պետական գրանցումը: Կազմակերպվել է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները:

Համայնքի մի շարք փողոցներում և դաշտամիջյան անանցանելի ճանապարհներում հող լցնելու և հարթեցնելու աշխատանքներ կատարելու համար հատկացվել է 7000000 (յոթ միլիոն) դրամ գումար:

Կազմակերպվել է համայնքի բարեկարգում և կանաչապատում, որի համար կատարվել է 990000(ինը հարյուր իննսուն հազար) դրամի ծախս:

Կատարվել է համայնքի գիշերային լուսավորության վերանորոգման աշխատանքներ, որի համար հատկացվել է 1970000 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 19-րդ փողոցի համար ձեռք բերված խողովակները տեղափոխելու և տեղադրելու համար հատկացվել է 2970000 /երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար/ դրամ գումար:

6.հողօգտագործման բնագավառում.

իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ:Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը:

7.առևտրի և ծառայությունների բնագավառում.

հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հսկողություն է իրականացվել առևտրի ծառայությունների ոլորտում:

8. տրանսպորտի բնագավառում.

իր իրավասության սահմաններում կազմակերպել է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա:

9.կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում.

հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ: Առաջին եռամսյակի ընթացքում՝ փետրվարի 27-ին, Արշալույսի Սամվել Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի հետ կազմակերպվել է միջոցառում նվիրված Սամվել Գրիգորյանի ծննդյան օրվան: Մարտի 8-ին՝ կանանց միջազգային տոնի առթիվ, 239 ծերության և հիվանդության թոշակառու կանանց հատկացվել է 717000 /յոթ հարյուր տասնյոթ հազար/ դրամ գումար: Իսկ համայնքի 66 ուսանողի հատկացվել է 330000 /երեք հարյուր երեսուն հազար/ դրամ գումար, ինչպես նաև միջնակարգ դպրոցի ուսուցիչների, <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների, բժշկական ամբուլատուրիայի և գյուղապետարանի աշխատակիցներին նվիրվել է ծաղիկներ, որի համար ծախսվել է 499500 (չորս հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր) դրամ:

Հունվարի 6-ի եկեղեցու տոներին կազմակերպվել են միջոցառումներ եկեղեցու բակում, որտեղ մասնակիցների և մյուս բնակիչների համար եղել են հյուրասիրություններ:

Մարտի 30-ին՝ գարնանամուտի առթիվ սուրբ Կարապետ սրբավայրում կազմակերպվել է հյուրասիրություն համայնքի մեծահասակ բնակիչների համար, որի համար ծախսվել է 500000 (հինգ հարյուր հազար) դրամ գումար:

Մայիսի 9-ին <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության, «ԱՐԿԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ի, բժշկական ամբուլատորիայի, գյուղապետարանի աշխատակիցների, դպրոցի ուսուցիչների և աշակերտների, համայնքի բնակիչների մասնակցությամբ ծաղիկներ են դրվել երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանին: Իսկ երկու համայնքի բնակիչներ երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին հատկացվել է 200000 (երկու հարյուր հազար) դրամ:

Մայիսի 28-ին Սարդարապատի ճակատամարտում թվով 2 զոհվածի գերեզմաններին դրվել է ծաղիկներ:Ինչպես նաև Սարդարապատում կազմակերպվել է միջոցառում նվիրված առաջին Հանրապետության օրվան, որի համար ծախսվել է 100000 (հարյուր հազար) դրամ:

Հունիսի 9-ին ՓՅՈՒՆԻԿ ԲՀ-ի կողմից Արշալույս գյուղական համայնքի բժշկական ամբուլատորիային որպես նվիրատվություն հատկացվել է ՄԵՐՍԵԴԵՍ ԲԵՆՑ 412 D շտապ օգնության մեքենա:

Հունիսի 19-ին բուժաշխատողի օրվա առթիվ կազմակերպվել է հյուրասիրություն համայնքի բժշկական ամբուլատորիայում:

Ինչպես նաև կատարվել է երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի վերանորոգում և պահպանում:

10.աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում.

հատկացվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին, կերակրողին կորցրած և զոհված ազատամարտիկների ընտանիքներին 2846000(երկու միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար) դրամ գումար : Հատկացվել է 420000 (չորս հարյուր քսան հազար) դրամ գումար համայնքում ծնված 21 երեխաների ծնողների:
Կիրառվել է գույքահարկի գծով արտոնություն համայնքի սոցիալապես անապահով թվով 2 ընտանիքի նկատմամբ 30000 (երեսուն հազար) դրամ:

11.գյուղատնտեսության բնագավառում.
կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ:Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորությունների շրջանակում նպաստել է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործմանը:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 15 որոշում, արձակվել է 16 կարգադրություն՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման, համայնքում շենքերի և շինությունների համարակալման, ինքնակամ զբաղեցրած հողամասը և ինքնակամ կառուցված օժանդակ կառույցը օրինականացնելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու վերաբերյալ:
Ավագանու գործունեությունը կազմակերպվել է հաստատված կանոնակարգի հիման վրա, կայացրած վեց նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու կողմից քննարկվել են համայնքի շահերին վերաբերվող հարցեր և կայացվել են առաջին եռամսյակում 13 և երկրորդ եռամսյակում 24 որոշումներ:Հաստատվել են համայնքի 2011 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները, համայնքի ղեկավարի աշխատակազմի և <<Կրթություն և մշակույթ >> միացյալ տնօրինության հաստիքացուցակների, թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերում կատարված փոփոխությունները, հաստատվել է 2011 թվականի փետրվարի 25 -ին ստեղծված «ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:Հաստատվել է համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, համայնքային ենթակայության այլ հիմնարկների ու կազմակեպությունների վերանվանումը, համայնքի 2011 թվականի բերքի տակ բնակչության տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի ամենօրյա օգնությամբ իրականացվել են միջնակարգ դպրոցի, բժշկական ամբուլատորիայի արդյունավետ գործունեությունը, որոնք իրենց լիազորությունների սահմաններում բարեխիղճ և պարտաճանաչ կերպով սպասարկել են ազգաբնակչությանը:

Համայնքն ունի այնպիսի կարևոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝
ա)խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում
բ)ոռոգման ջրի խողովակաշարի անցկացումը
գ)մանկապարտեզի շենքի կառուցումը
դ)մշակույթի տան կապիտալ վերանորոգումը:

Համայնքի ղեկավար Գրիգորյան

2011 թվականի հուլիսի 15
գ. Արշալույս